ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2013-2-1-Ա

ք. Երևան 28.06.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի հունիսի 25-ի նիստում քննարկեց 2012 թվականի դեկտեմբերի 3-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ Դեբենհամս Փրինսիփլզ Լիմիթիդ ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) «PRINCIPLES» (IR925681) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի "ա" և "բ" ենթակետերի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 115-րդ կետի 1-ին ենթակետի, 116-րդ կետի 1-ին ենթակետի, 117-րդ կետի, 118-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան նույնական և նույնատիպ ապրանքների համար միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում պահպանվող շփոթելու աստիճան նման "PRINCIPE" (VALENTINO FASHION GROUP S.P.A. Via Turati, 16/18 I-20121 MILANO Italy, IR636268) ապրանքային նշանի առկայության պատճառով, քանի որ նշաններն ունեն գրաֆիկական նմանություն:

Մինչ բողոքի ըստ էության քննարկումը բողոքարկողը ներկայացրեց բանավոր նոր միջնորդություն բողոքի քննարկումը հետաձգելու վերաբերյալ, սակայն բողոքարկման խորհուրդը մերժեց:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ բողոքարկողը բողոքարկման խորհուրդ չի ներկայացրել որոշման անճշտությունը հաստատող որևէ հիմնավոր փաստարկ, ինչպես նաև ներկայացված չէ հակադրված նշանի չօգտագործման հետևանքով չեղյալ հայտարարելու վերաբերյալ դատարանի վճիռը:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված «PRINCIPLES» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ Գ. Մելքոնյան